

**ՌՈՒԲԵՆ ՕՐԲԵԼՈՒ ԶՐԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ  
ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ  
Հարությունյան Մ. Ա., Դայան Ս. Ծ.**

Աշխատանքը բովանդակում է Ռուբեն Աբգարի Օրբելու՝ որպես ջրահնագիտության հիմնադրի, գիտական ներդրումը համաշխարհային գիտակրթական համակարգ: Աշխատանքում հիմնավորվում է հայրենագիտական համալիր աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը կրթական տարբեր աստիճաններում, և տրված է կազմակերպման աշխատանքային պլան-աղյուսակ:

**Բանալի բառեր.** Ռ. Օրբելի, ջրահնագիտություն, ջրասուզակ, պատմական աշխարհագրություն, հայրենագիտական, նախագծահետազոտական աշխատանքներ:

**Նախաբան:** 20-րդ դարի երկրորդ կեսից պատմաաշխարհագրական և հնէաաշխարհագրական համալիր և տրանսդիսցիպլինար հետազոտությունների մեջ իր ուրույն տեղը ունի ջրահնագիտությունը: Գաղտնիք չէ, որ հնագույն ժամանակներից մարդկային հասարակության կյանքի տնտեսական կազմակերպումը կապված է ջրային ավազանների յուրացման հետ: Ժամանակի ընթացքում մարդը բնակեցրեց ցամաքի ավիամերձ շրջանները, սակայն ջրի պարբերաբար ցամաք ներխուժելու արդյունքում հնագույն քաղաքակրթությունների հետքերը ծածկվեցին ջրով: Եվ միայն ջրասուզակային գործի զարգացմամբ ստորջրյա մշակութային հնագիտական արժեքների ուսումնասիրությունը ստանձնեց ջրահնագիտությունը [2]: ԽՍՀՄ-ում ստորջրյա հնագիտության հիմնադիրներից դարձավ հայազգի Ռուբեն Աբգարի Օրբելին:

Ռ. Օրբելին առաջինը չէր, որ զբաղվել է ջրահնագիտության խնդիրներով, բայց նա առաջինն էր, որ ակադեմիական խորությամբ դիտարկեց և քննարկեց պատմագիտության այս ուղղությունը և այն

կապեց այլ գիտությունների, մասնավորապես պատմական աշխարհագրության հետ: Ռ. Օրբելին օգտագործեց «ջրահնագիտություն» եզրույթը, որի փոխարեն մինչ այդ հնչում էր «ստորջրյա հնագիտություն» եզրույթ: «Ջրահնագիտություն» եզրույթի ընտրությունը բացատրում էր հետևյալ կերպ. «Տերմինը գրագետ է, դիպուկ և գիտականորեն հիմնավորված, և այն ներառում է ոչ միայն ջրի հատակին գտնվող, այլև այն ամենը, ինչ ջրերը դուրս են նետում ծովերից, օվկիանոսներից և գետերից» [6]: Ռուբեն Օրբելին գտնում էր, որ ջրաժամանակագրությունը պետք է սկսել ջրասուզակային գործի պատմության ուսումնասիրմամբ [4, 7]:

Իր ուսումնասիրությունները կատարելով ժամանակագրական հաջորդականության պահպանման տրամաբանությամբ՝ Ռ. Օրբելին սկսել է ջրասուզակի կերպարի բացահայտմամբ: Առաջին սուզորդներին նա համարեց իխտիոֆագներին (ձկնակերներ): Ռ. Օրբելու հավաստմամբ սուզորդական ամենապարզ տեխնիկական միջոցները հայտնի էին բաբելացիներին, եգիպտացիներին, հույներին, հռոմեացիներին, գալլերին, արևելքի ժողովուրդներին, որոնք ջրային ավազանները օգտագործում էին մարգարիտների, կորալների, ծովային սպունգների, ջրիմուռների, պղնձի արդյունահանման համար: Ջրասուզակները ծառայում էին նաև ռազմական գործին. նրանց դերը չէր սահմանափակվում մարտերին մասնակից լինելով: Նրանք նաև գաղտնի կերպով սնունդ էին մատակարարում պաշարված բնակավայրերին [4]:

Ջրասուզակների և ջրասուզակային գործի մասին մտքերը Ռ. Օրբելին շարադրել է «Ջրասուզակի կերպարը մեծ մտածողների ստեղծագործություններում», «Հունաստանի և Հռոմի ջրասուզակները» աշխատություններում՝ ուսումնասիրելով հայտնի փիլիսոփաների աշխատությունները և տարբեր ազգերի ժողովրդական բանահյուսությունը, լեգենդները [4, 5, 6]:

Ռ. Օրբելին նշում է, որ միջնադարյան աղբյուրները այս գործի վերաբերյալ հետաքրքիր տեղեկատվություն չեն փոխանցում [4], սակայն ըստ Կ. Սուքիասյանի՝ հայ մատենագիտության մեջ ջրասուզակային գործի մասին հիշատակություններ կան 851թ. թվագրվող Մովսես Կաղանկատվացու մոտ, որտեղ պատմիչը հիշատակում է «խորեջք» բառը: Հիշատակություններ կան նաև Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Ջուղայեցու աշխատություններում, Ներսես Շնորհալու հանելուկներում, Կիլիկիայի հայոց իշխան Հեթում Կոռիկոսցու երկում: Ըստ Կ. Սուքիասյանի՝ Ռ. Օրբելու

աշխատանքներում այս ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկատվությունը բաց է մնացել, քանի որ վերջինիս ձեռքի տակ չեն եղել հայ մատենագրության վավերագրերը [3]:

Ներկայացնելով միջնադարյան մատենագրությունը՝ Ռ. Օրբելին առանձնացնում է Լեոնարդո դա Վինչիի աշխատանքները և վերծանելով դրանք՝ գրում է «Լեոնարդո դա Վինչին և նրա աշխատանքները ստորջրյա լողի եղանակների ընտրման և ստորջրյա ընկղմումների վերաբերյալ» գիրքը՝ ներկայացնելով ջրասուզակի կերպարը, վերլուծելով էսքիզները և հանդերձանքը [1; 4]:

Այսպես, հաջորդական տրամաբանությամբ Ռ. Օրբելին ուսումնասիրում է մինչև իր ապրած ժամանակները առկա տեղեկատվությունը ջրասուզակային գործի վերաբերյալ, որը իր մեջ ներառում էր եվրոպական և ռուսական պատմագիտական աղբյուրները [4]: «Հիդրոհնագիտություն. Ստորջրյա պատմական հետազոտություններ Սև ծովի ափին գտնվող հին հունական քաղաքների մոտ» աշխատության մեջ Ռ. Օրբելին առաջինն է ձևակերպել ջրահնագիտության հիմնական ուղղությունները՝ «Սահմանում և տերմինաբանություն» (փորձեր, աշխատանքի մեթոդներ), «Կազմակերպչական, իրավական խնդիրներ» (անձնակազմ), «Հնագիտական քարտեզ» (հետախուզություն, ուսումնասիրություններ ջրում, գտածոների հետազոտություն), «Ջրահնագիտական կազմակերպություն» (ավիացիա, ստորջրյա լուսանկարում, ջրաերկրաբանություն, ջրակենսաբանություն), «Քարոզչություն» (ակտիվ, հայրենագիտական թանգարաններ) [2]:

Ստորջրյա հնագիտության աշխատանքները ԽՍՀՄ-ում կապված են հատուկ նշանակության ստորջրյա աշխատանքների արշավախմբի գործունեության հետ (ЭПРОН): 1937թ. ԷՊՐՈՆ-ի ղեկավար Ֆ. Ի. Կրիլովի հրամանով վերջինիս կազմում ձևավորվում է հատուկ աշխատանքային խումբ Ռ. Օրբելու ղեկավարությամբ, և սկսվում են փրկարարական և ստորջրյա պեղումներ ծովերում և պատմական վայրերում [8]: Ռ. Օրբելին ղեկավարում է փրկարարական և ստորջրյա պեղումներ Խերսոնես և Օլիվիա հնագույն քաղաքներում, Բուզ գետի հատակը Սաբոտինովկա գյուղի շրջակայքում, Թեոդոսիա, Կոկտեբել և Կերչ հնագույն նավահանգստային քաղաքներում: Ցավոք, Ռ. Օրբելու հետագա հետազոտությունները ընդհատվեցին Հայրենական մեծ պատերազմի պատճառով, հետագա հիվանդության, ապա՝ 1943թ. մահվան պատճառով [1:2]:

Այսպիսով, Ռ. Օրբելին առաջինն էր, որ ջրասուզակային գործը կապեց գիտության հետ և այն ուսումնասիրեց իր ողջ պատմական ընթացքի մեջ: Նա ցույց տվեց և հիմնավորեց այս գործի կապը մշակույթի, տեխնիկայի, նավաշինության, նավագնացության, միջազգային ծովային հաղորդակցության պատմության և, իհարկե, պատմական աշխարհագրության հետ, որը հիմք դրեց «Ստորջրյա պատմական աշխարհագրության» զարգացմանը [2]: Ռ. Օրբելին կարևորում էր կրթական ասպեկտով հայրենագիտական և ջրահնագիտական մասնագիտացված թանգարանների և ինստիտուտների դերը [2,6]: Ճանաչողահետազոտական հետաքրքրասիրությունը բարձրացնելու համար ջրահնագիտական գիտելիքների համակարգը առաջարկում ենք ներառել «Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» և «Կրթական հայրենագիտություն և տուրիզմ» բուհական դասընթացներում, որոնք դասավանդվում են ՀՊՄՀ-ում, ապա դպրոցական կրթական համակարգ՝ տեսական և գործնական դասարանային և արտադասարանային ուսուցման կազմակերպման ձևերով՝ ուսուցման մասնակի-որոնողական մեթոդի կիրառմամբ նախագծահետազոտական աշխատանքների տեսքով՝ ըստ մեր կողմից մշակված փուլերի (աղ. 1), որոնք իրենց մեջ ներառում են նաև աշխարհագրական կրթության բովանդակության հիմնական բաղադրիչները (գիտելիք, կարողություն, ստեղծագործական գործունեության փորձ, հուզարժեքային վերաբերմունքի փորձ, տարածաշրջանային բաղադրիչ) և առավել արդյունավետ են դարձնում ուսումնասիրությունը: Նախագծային-հետազոտական աշխատանքը ապահովում է աշակերտակենտրոն ուսուցում՝ բացառելով պատրաստի գիտելիքի մատուցումը և մեխանիկական սերտումը սովորողի կողմից: Այս աշխատանքի ընթացքում սովորողը ստանձնում է որոնողի, հետազոտողի, կիրառողի և ստեղծողի դեր: Աշխատանքի առավելությունը այն է, որ նախագիծը ունի կոնկրետ նպատակ, գործողությունների քայլաշար, նախապես տեսանելի է վերջնարդյունքը, սակայն մյուս կողմից ենթադրում է ճշմարտության բացահայտումը առանց վերջնարդյունքի իմացության:

**Եզրահանգում:** Հիրավի, Ռ. Օրբելին համարվում է ջրահնագիտության հիմնադիրը, ով պատմական և աշխարհագրական մոտեցմամբ հիմնավորել է ջրահնագիտական ուսումնասիրությունների դերը և նշանակությունը: Առաջարկում ենք ՀՀ ուսումնական հաստատություններում ընդլայնել հայրենագիտական համալիր

(պատմական, աշխարհագրական, հնէաաշխարհագրական, ջրահնագիտական) նախագծային-հետազոտական աշխատանքների կազմակերպումը, որոնք կնպաստեն սովորողների ճանաչողական հետաքրքրության, մասնակի-որոնողական մեթոդների կիրառման, ոչ ֆորմալ կրթության կազմակերպման, հայրենագիտական բաղադրիչի արժևորման, երկրագիտական թանգարանների ստեղծման գործընթացին՝ չմոռանալով կարևորել Ռուբեն Օրբելու ավանդը ջրահնագիտության մեջ:

**Աղյուսակ 1:**

Հայրենագիտական նախագծային-հետազոտական աշխատանքի կազմակերպման պլան ուսուցման մասնակի-որոնողական մեթոդի կիրառմամբ					
Աշխատանքի կատարման փուլ	Կատարվող աշխատանքի բնութագիր	Ձևավորվող աշխարհագրական կրթության բաղադրիչները			
		Գիտելիքներ	Կարողություն	Ստեղծագործական գործուն. փորձ	Հուզարժեքային վերաբերմունքի փորձ Տարածաշրջանային բառ.
<b>I նախապատրաստական</b> խնդրի առաջադրում, նախատիպի որոնում	Առաջադրվում է աշխատանքի նպատակը, ապա հետազոտության տեսական մեթոդներով սովորողները հավաքագրում և վերլուծում են առկա գիտական տվյալները:				
<b>II խնդրի լուծում</b> սեփական հետազոտական աշխատանքի նկարագրում և վերլուծություն	Հետազոտության էմպիրիկ և տեսական մեթոդներով սովորողները իրականացնում են իրենց հետազոտական հայրենագիտական աշխատանքը (պատմաաշխարհագրական, հնէաաշխարհագրական, ջրահնագիտական, ֆիզիկաաշխարհագրական, սոցիալ-տնտեսաաշխարհագրական) և SWOT վերլուծության ենթարկում դրանք:				
<b>III ամփոփում և եզրահանգում</b>	Ընդհանրացում, եզրակացություն հաշվետվություն-գեկույցի ներկայացում:				
<i>+ նշված են այն բաղադրիչները, որոնք կարող են ձևավորվել տվյալ փուլում</i>					

## ГИДРОХРОНОЛОГИЧЕСКИЕ ИНВЕСТИЦИИ РУБЕНА ОРБЕЛИ В РАЗВИТИЕ ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЙ НАУКИ

Арутюнян М. А., Даян С. Ц.

Статья о научном вкладе Рубена Орбели в мировую научно-образовательную систему как основателя гидрологии. В работе обоснована необходимость организации комплексных историко-географических патриотических работ на разных уровнях образования, дан рабочий план организации этих работ.

**Ключевые слова:** Р. Орбели, гидрология, дайвинг, историческая география, патриотические, проектно-исследовательские работы.

## RUBEN ORBELI'S HYDROCHRONOLOGICAL INVESTMENTS IN THE DEVELOPMENT OF HISTORY-GEOGRAPHICAL SCIENCE

Harutyunyan M. A., Dayan S. Ts.

The paper touches upon the study of the scientific contribution of Ruben Orbeli to the world scientific and educational system as the founder of hydrology. The work substantiates the need to organize complex historical-geographical patriotic works at different levels of education, and gives a work plan for organizing these works.

**Keywords:** R. Orbeli, hydrology, diving, historical geography, patriotic, design and research work.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռուբեն Օրբելի Դարերի և ջրերի խորքում: Ծաղկաձոր: Օրբելի եղբայրների տուն-թանգարան: 2016: 254 էջ:
2. Окороков А. В. История подводной археологии в России и СССР, Часть 1 // Культурологический журнал. 2013. № 3 (13) С. 12
3. Սուքիասյան Վ. Հայկական աղբյուրների տեղեկությունները ջրասուզակության մասին // Լրաբեր հասարակական գիտությունների: 1981: № 6: էջ 93-97:
4. Орбели Р.А. Исследования и изыскания (Материалы к истории подводного труда с древнейших времен до наших дней). М.—Л., Речиздат. 1947. С. 284.

5. Следков А. Ю. Рубен Орбели ученый и богослов. // “Двадцатые петровские чтения (история, политология, социология, философия, экономика, культура, образование и право)”. Материалы всероссийской научной конференции с международным участием. 21–22 ноября 2018 года. Санкт-Петербург. Изд.-во: Северная звезда. 2019. С. 80-85.
6. Следков А. Ю. Мандрик М. В. Рубен Абгарович Орбели: К 140-летию со дня рождения. // Вопросы подводной археологии. №10. 2019. С. 67-102.
7. Ավագյան Ի. Է. «Ստորջրյա հնագիտության» դասավանդման անհրաժեշտությունը ՀՀ-ՈԻՄ// Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան: «Գիտական տեղեկագիր»: 2020: №1, պրակ Բ: Էջ 265-275:
8. Таскаев В. Н. Античная подводная археология Северного Причерноморья (Издание второе, дополненное и переработанное). // Воронцовка, 21. Москва 2007. С. 26-31.

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Հարությունյան Մ. Ա.** – մագիստրանտ  
 Հայկական պետական մանկավարժական համալսարան  
 Էլ. փոստ՝ [harutyunyan\\_mane29@mail.ru](mailto:harutyunyan_mane29@mail.ru)

**Դայան Ս. Մ.** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Հայկական պետական մանկավարժական համալսարան  
 Էլ. փոստ՝ [dayan.sima@mail.ru](mailto:dayan.sima@mail.ru)

Տրվել է խմբագրություն՝ 20.09.2021  
 Գրախոսվել է՝ 23.12.2021